ՃԱՆԱՉԻՐ ԹՇՆԱՄՈՒԴ. ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(Ռազմավարություն տասներեքերորդ)

Կարևոր է գիտակցել, որ ձեր ռազմավարական ծրագրերի օբյեկտը ոչ այնքան բանակն է, որի դեմ պետք է պատերազմել, որքան ղեկավարող անձը: Եթե կարողանաք պարզել, թե ինչ է նրա մտքում, ապա ձեր տրամադրության տակ կստանաք որոշակի բանալիներ, որոնք թույլ կտան վերահսկել այդ մարդուն: Այսպիսով, ձեր հաջորդ խնդիրն է տիրապետել մարդկանց «կարդալու» արվեստին, նկատել և մեկնաբանել այն նշանները, որոնք նրանք ձեզ տալիս են՝ առանց ակամայից բացահայտելով ձեր խորքային գաղափարներն ու մտադրությունները: Բարյացակամ և հյուրընկալ տեսքը թույլ կտա ձեզ ավելի մոտենալ նրանց՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար: Ուշադիր եղեք, որպեսզի պատահաբար չբացեք ձեր սեփական ներաշխարհը հակառակորդներին: Փորձեք որդեգրել նրանց մտածելակերպը: Եթե ձեզ հաջողվի բացահայտել ձեր մրցակիցների հոգեբանական խոցելի կողմերը, անշուշտ, այն կօգնի ձեզ նրանց դուրս բերել հավասարակշռությունից:

ԵՏ ՄՂՎԱԾ ԹՇՆԱՄԻՆ

1838 թվականի հունիսին Հնդկաստանի բրիտանացի գեներալ-նահանգապետ լորդ Օքլենդը հավաքեց բարձրաստիճան պաշտոնյաներին՝ նրանց հետ քննարկելու Աֆղանստան ներխուժման նախագիծը: Օքլենդին, ինչպես և մյուս բրիտանացի դիվանագետներին, ավելի ու ավելի էր անհանգստացնում Ռուսաստանի աճող ազդեցությունն այս տարածաշրջանում: Ռուսներն արդեն բարեկամական դաշինք են կնքել Պարսկաստանի հետ: Այժմ նրանք փորձում էին նույնը իրականացնել Աֆղանստանի հետ հարաբերություններում: Եթե նրանց դա հաջողվեր, բրիտանացիները Հնդկաստանում բաց կլինեին Ռուսաստանի կողմից հնարավոր հարձակումների համար: Փոխանակ փորձելու հաղթել ռուսներին և դաշինք կնքել Աֆղանստանի առաջնորդ Էմիր Դոստ Մուհամմադի հետ, Օքլենդն առաջարկեց լուծում, որը նրան ավելի հուսալի էր թվում՝ գրավել Աֆղանստանը և տապալել Էմիրին: Որպես կառավարիչ՝ նա առաջարկեց շահ Շուջու ուլ-Մուլքին, որը նախկինում ղեկավարում էր երկիրը, բայց գահընկեց էր արվել և վտարվել էր Աֆղանստանից նկարագրված իրադարձություններից քսանհինգ տարի առաջ: Այս տարբերակով շահը իրեն պարտավորված կհամարեր անգլիացիներին:

Այդ օրը Օքլենդի զեկույցը լսող պաշտոնյաների թվում էր Ուիլյամ Հեյ Մակնաթենը՝ Կալկաթայի կառավարության քառասունհինգամյա գլխավոր քարտուղարը: Մակնաթենի համար ներխուժումը թվում էր հանճարեղ ծրագիր: Բարեկամական Աֆղանստանը կպաշտպաներ բրիտանական շահերը տարածաշրջանում և նույնիսկ կնպաստեր բրիտանական ազդեցության տարածմանը: Ավելին, ծրագիրը թվում էր բացարձակ վստահելի: Բրիտանական բանակը դժվարություն չէր ունենա ոչնչացնելու դեռևս պարզունակ ցեղային մակարդակում գտնվող աֆղանացիներին: Ամեն ինչ կներկայացվեր ազատագրական պայքարի քողի ներքո, որի նպատակը պետք է հանդիսանար «երկրին ու աֆղանացիների ազատագրումը ռուսական բռնապետությունից», բացի բրիտանական ազնվական ազդեցությունից, որը բերելու էր իր օգնությունը: Հենց որ Շուջա ուլ-Մուլքը գահ բարձրանար բանակը կլքեր երկիրը: Չնայած բրիտանական ազդեցությունը շահի վրա զգալի կլիներ, թեև ամենևին էլ նկատելի չէր լինի հասարակ աֆղանցիների համար:

Երբ սկսվեցին նախագծի քննարկումները, Մակնաթենը ոգևորությամբ արտահայտեց իր աջակցությունը: Նրա ոգևորությունն այնքան մեծ էր, որ լորդ Օքլենդը ոչ միայն հաստատեց նրա մտադրությունը, այլև հայտարարեց, որ Մակնագթենը նշանակվում է որպես դիվանագիտական ներկայացուցիչ Քաբուլում, որպես Նորին Մեծության դեսպան, որը Մեծ Բրիտանիայի ամենաբարձր դիվանագիտական կոչումն է Աֆղանստանում:

Գրեթե ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ բրիտանական բանակը 1839 թվականի օգոստոսին մտավ Քաբուլ: Դոստ Մուհամմեդը փախավ լեռներ, իսկ շահը վերադարձավ իր քաղաք: Տեղացիների համար այս ամենը տարօրինակ էր: Շուջա ուլ-Մուլքը, որին քչերը էին հիշում, խղճուկ և ծեր տեսք ուներ, և պարզ էր, որ նա հնազանդվում էր Մակնաթենին, ով քաղաք էր մտել շքեղ համազգեստով և ջայլամի փետուրներով զարդարված գլխարկով: Ինչո՞ւ էին այս մարդիկ այստեղ եկել: Ի՞նչ էր սպասվում նրանցից:

Շահի իշխանության վերականգնումից հետո Մակնաթենը ստիպված էր վերանայել իրավիճակի իր գնահատականը: Նա տեղեկություններ էր ստանում, որ Դոստ Մոհամմեդը հյուսիսի լեռներում բանակ էր հավաքում: Մինչդեռ, հարավային

Աֆղանստանում բրիտանացի զինվորները դժվարանում էին լեզու գտնել տեղի ցեղապետերի հետ: Բրիտանացիները զբաղված էին թալանով, ինչը տեղի ցեղապետերի շրջանում թշնամանք էր առաջացնում և այս ցեղապետերը սկսում էին տարաձայնություններ սերմանել: Ակնհայտ էր նաև, որ շահը ժողովրդականություն չէր վայելում իր նախկին հպատակների շրջանում և դա այնքան էր նկատելի, որ Մակնաթենը չէր կարող նրան անպաշտպան թողնել՝ վախենալով, որ հակառակ դեպքում բրիտանական շահերը երկրում կտուժեն: Դժկամությամբ և ծանր սրտով Մակնաթենը հրամայեց բրիտանական զորքերի մեծ մասին մնալ Աֆղանստանում մինչև իրավիճակի լիակատար կայունացումը:

Ժամանակն անցնում էր, և Նորին Մեծության դեսպանը վերջապես որոշեց թույլ տալ, որ օկուպացիոն բանակի սպաներն ու զինվորները, որոնց գտնվելու ժամկետը երկրում անորոշ ժամանակով հետաձգվում էր, հանդիպեն իրենց ընտանիքներին՝ հույս ունենալով, որ դա կթեթևացնի նրանց դժվարին կյանքը: Շուտով ժամանեցին զինվորականների կանայք և երեխաները՝ իրենց հնդիկ ծառաների հետ միասին: Բայց այս քայլը չարդարացրեց Մակնաթենի հույսերը, ով պատկերացնում էր, որ զինվորների և սպայական ընտանիքների ժամանումը խաղաղ ազդեցություն կունենա և ինչ-որ կերպ կքաղաքակրթի հարաբերությունները: Ընդհակառակը, աֆղանցիներն սկսեցին զգուշանալ: Արդյո՞ք բրիտանացիները չեն ծրագրում մշտական օկուպացիա, չեն պատրաստվում Աֆղանստանը վերածել իրենց գաղութի: Տեղի բնակիչներն ամեն քայլափոխի նկատում էին բրիտանական ներկայության հետքերը, անգլիացիներն ամենուր էին, նրանք բարձրաձայն խոսում էին փողոցներում, գինի էին խմում, այցելում էին թատրոններ ու ձիարշավներ: Այս անսովոր զվարճանքները նրանք նույնպես իրենց հետ էին բերել: Բայց այդ, հիմա այստեղ բնակվում էին նաև նրանց տնային տնտեսուհիները, ովքեր իրենց զգում էին ինչպես իրենց տանը:

Աֆղանցիների մեջ իսկական ատելություն առաջացավ եվրոպական, արևմտյան ամեն ինչի նկատմամբ: Մակնաթենին մեկ անգամ չէ, որ զգուշացրել են իրադարձությունների նման զարգացման հնարավորության մասին, բայց բոլորի համար նա ուներ մեկ պատասխան՝ հենց զորքերը դուրս բերվեն Աֆղանստանից, ամեն ինչ կմոռացվի և կներվի: Աֆղանցիները միամիտ են, ինչպես երեխաները, նրանք զգացմունքային են, բայց դյուրահանդարտ: Իրենց վրա զգալով արևմտյան քաղաքակրթության բարիքները՝ նրանք միայն երախտապարտ կլինեն: Սակայն կար մի հանգամանք, որը մտահոգում էր հենց դեսպանին: Բրիտանական կառավարությունը դժգոհություն էր հայտնում այն փաստից, որ երկրի օկուպացիան պահանջում էր անընդհատ նոր և զգալի ծախսեր:

Մակնաթենը պետք է ինչ-որ բան մտածեր այդ ծախսերը նվազեցնելու համար, և նա որոշեց, թե որտեղից պետք է սկսել: Աֆղանստանի հիմնական առևտրային ճանապարհներով անցնող լեռնային ճանապարհների մեծ մասը վերահսկվում էր Գիլզայ ցեղի կողմից: Տարիներ շարունակ, անկախ երկրի հաջորդական կառավարիչներից, գիլզայները հարկ էին գանձում լեռնանցքներն օգտագործողներից: Մակնաթենը որոշեց կիսով չափ կրճատել վճարը: Գիլզայները պատասխանեցին՝ փակելով անցուղիները, և ամբողջ երկիրը համակրանքով վերաբերվեց էր ապստամբ ցեղի այդ քայլին: Անակնկալի եկած Մակնաթենը փորձեց ճնշել ապստամբությունը, միաժամանակ լուրջ չընդունելով այն: Մինչդեռ անհանգստացած սպաները, ովքեր պահանջում էին ավելի կոշտ միջոցներ ձեռնարկել, հեռացվեցին պաշտոններից՝ անկումային տրամադրությունների և խուճապ առաջացնելու մեղադրանքով: Ամեն ինչ ցույց էր տալիս, որ բրիտանական բանակը ստիպված էր անորոշ ժամանակով մնալ

Աֆղանստանում: Մինչդեռ իրավիճակը սրընթաց վատանում էր: 1841 թվականի հոկտեմբերին ամբոխը ներխուժեց բրիտանացի պաշտոնյաներից մեկի տուն և սպանեց նրան:

Քաբուլում տեղի ցեղային առաջնորդները դավադրություն էին նախապատրաստում բրիտանական տիրապետությունը տապալելու համար: Շահ Շուջա ուլ-Մուլքը խուճապի էր մատնվել: Նա անընդհատ աղաչում էր Մակնաթենին թույլ տալ իրեն հաշիվներ մաքրել նախկին թշնամիների հետ, գերի վերցնել և վերացնել նրանց՝ իր անկայուն դիրքը ամրապնդելու համար: Մակնաթենը անփոփոխ պատասխանում էր, որ քաղաքակիրթ պետությունում քաղաքական խնդիրները լուծելու համար սպանության դիմելը անընդունելի է: Շահը հիանալի հասկանում էր, որ աֆղանացիները գնահատում են ուժն ու իշխանությունը, այլ ոչ թե «քաղաքակիրթ արժեքները»: Նրանց աչքերում թշնամու հետ գործ չունենալու անկարողությունը թուլության և կառավարման համար անպիտանության նշան էր: Արդյունքում՝ թշնամիների և չարախոհների թիվն աճեց: Մակնաթենը համառորեն չէր լսում:

Ապստամբությունը տարածվում էր, և Մակնաթենը ստիպված էր ընդունել այն փաստը, որ նա չունի բավարար մարդիկ հիմնական օջախները ճնշելու համար: Բայց նա դեռ խուճապի պատճառ չէր տեսնում: Աֆղանցիները և նրանց ղեկավարները միամիտ են: Նա հեշտությամբ կվերադարձնի իշխանությունը՝ դիմելով խորամանկության և ինտրիգների: Այդ նպատակով Մակնաթենը սկսեց Աֆղանստանից Բրիտանական զորքերի ու քաղաքացիների դուրս բերման պայմանագրի հրապարակային քննարկում:

Փոխարենը, աֆղանցիները պետք է հեռացող բրիտանացիներին ապահովեին սնունդով: Միևնույն ժամանակ, Մակնաթենը փորձեց գաղտնի բանակցություններ վարել մի քանի ամենահզոր առաջնորդների հետ՝ խոստանալով, որ պատրաստ է նրանցից մեկին դարձնել երկրի մեծ վեզիր և մեծ գումարներ տալ՝ ի նշան երախտագիտության անկարգությունները ճնշելու և բրիտանացիներին երկրում մնալու թույլտվության հարցում ցուցաբերած օգնության համար:

Արևելյան Գիլզայի առաջնորդ Ակբար Խանը համաձայնվեց քննարկել առաջարկը, և այդպիսով 1841 թվականի դեկտեմբերի 23-ին Մակնաթենը գաղտնի հանդիպման գնաց նրա հետ՝ համաձայնագիրը ստորագրելու համար: Հանդիսավոր ողջույնի փոխանակումից հետո Ակբար Խանը հարցրեց, թե արդյոք Մակնաթենը հաստատակամ է պլանը իրականացնելու գործում: Հաղթանակի մոտալուտ լինելուց և իրավիճակի շրջադարձից ոգևորված՝ Մակնաթենը ուրախությամբ հաստատեց իր պատրաստակամությունը: Ակբարը, առանց որևէ խոսք ասելու, նշան արեց իր մարդկանց, որպեսզի ձերբակալեն դեսպանին: Ակբարը մտադրություն չուներ դավաճանել մյուս առաջնորդներին:

Փողոցում նրանց շրջապատեց զայրացած աֆղանցիների ամբոխը, որոնք իմացել էին գաղտնի բանակցությունների մասին, և տարիների նվաստացումներից զսպված զայրույթով նրանք բառացիորեն կտոր-կտոր արեցին անգլիացուն: Դժբախտ մարդու գլուխն ու վերջույթները շքերթով տարան Քաբուլի փողոցներով, իսկ նրա մարմինը շուկայում կախեցին մսագործի կեռիկից:

Հաշված օրերի ընթացքում ամեն ինչ փոխվեց: Բրիտանական զորքերը, որոնք այդ ժամանակ մնացել էին Աֆղանստանում՝ մոտ 4,5 հազար զինվորական և 12 հազար ուղեկցորդներ, եղանակային անբարենպաստ պայմաններում, ստիպված էին անմիջապես նահանջել: Խստորեն ասած, աֆղանացիները պարտավոր էին սնունդ մատակարարել հեռացող զորքերին, բայց նրանք այդ պայմանը այդպես էլ չկատարե-

ցին: Համոզված լինելով, որ բրիտանացիներին խաղաղ ճանապարհով ուղարկել հնարավոր չէ, աֆղանացիները սկսեցին անընդհատ հարձակվումներ գործել նրանց վրա: Այս անկազմակերպ նահանջի ընթացքում զոհվեցին հազարավոր զինվորներ և խաղաղ բնակիչներ:

1842 թվականի հունվարի 13-ին Ջալալաբադ ամրոցում գտնվող բրիտանական զորքերը ամրոցի դարպասների մոտ տեսան մի ձի: Նրա կիսամեռ հեծյալը՝ Ուիլյամ Բրայդոնը, բրիտանական բանակի միակ ներկայացուցիչն էր, ում բախտ էր վիճակվել կենդանի մնալ Աֆղանստան ներխուժելու աղետալի փորձից հետո:

Մեկնաբանում

Մակնաթենը կարող էր կանխել աղետը: Դրա համար անհրաժեշտ բոլոր տվյալներն ու գիտելիքները նրա տրամադրության տակ էին դեռևս նախքան իր աֆղանական արշավանքը սկսելը: Աֆղանստանում ապրող և երկրին ծանոթ բրիտանացիներն ու հնդիկները, անկասկած, նրան ասել էին, որ աֆղանցիները ամենահպարտ և ամենաանկախ ժողովուրդներից մեկն են: Քաբուլի փողոցներով հաղթականորեն քայլող օտարերկրյա զորքերի տեսարանն անգամ անմոռանալի նվաստացում էր նրանց համար: Եվ նրանց, անշուշտ, չէր կարելի անվանել խաղաղասեր ժողովուրդ, ովքեր ձգտում էին բարգավաճման, հաշտեցման և ներդաշնակության: Իրականում թշնամանքն ու անընդհատ բախումները նրանց համար նորմա էր:

Մակնաթենը գիտեր ամեն բանի մասին, բայց աչք էր փակում դրա վրա՝ համառորեն չցանկանալով ի գիտություն ընդունել ակնհայտ փաստերը: Նա աֆղանցիներին մոտեցավ իր անգլիական չափանիշներով՝ եվրոպական բարոյականությունը համարելով համընդհանուր: Կուրացած, հպարտությամբ լի՝ նա գնահատում էր այն ամենը, ինչ տեղի է ունենում ճիշտ հակառակը: Արդյունքում, նրա յուրաքանչյուր խորամանկ ռազմավարական քայլ՝ բրիտանական բանակը Քաբուլում թողնելը, գիլզաների տուրքը կիսով չափ կրճատելը, անկարգություններին ու դժգոհություններին չափազանց մեծ նշանակություն չտալը, բոլորը մեկ-մեկ ապացուցեցին, որ նա սխալ է: Եվ այն ճակատագրական օրը, երբ Մակնաթենը բառացիորեն կորցրեց գլուխը, նա կատարեց իր վերջին սխալ հաշվարկը՝ որոշելով, որ փողով և անձնական շահի խոստումներով կարելի է գնել հենց այն մարդկանց նվիրվածությունը, ում նա, թեկուզ ակամա, անընդհատ նվաստացման էր ենթարկում:

Այսպիսի կուրությունն այնքան էլ հազվադեպ չէ մեր օրերում: Իրականում մենք դրան բախվում ենք ամեն քայլափոխի: Մենք, բնականաբար, հակված ենք այլ մարդկանց ընկալել որպես մեր արտացոլումը, նրանց վերագրել մեր սեփական տեսակետներն ու ցանկությունները: Մենք չենք կարող հասկանալ, թե ինչպես են ուրիշները տարբերվում մեզանից, զարմանում ենք, եթե նրանք ինչ-որ բանի սխալ են արձագանքում, չեն վարվում այնպես, ինչպես մենք ակնկալում ենք: Առանց դա նկատելու, մենք վիրավորում և հեռացնում ենք մարդկանց մեզանից, իսկ հետո մեղադրում ենք նրանց՝ նրանց, և ոչ թե հասկանալու մեր անկարողությունը: (Այս թերությունը, ի դեպ, բնորոշ է ամբողջ աշխարհի մարդկանց, քանի որ բրիտանացիները ոչ մի դեպքում միակը չեն, ովքեր իրենց համարում են տիեզերքի կենտրոն):

Կարևոր է հասկանալ, որ եթե թույլ տաք, որ ձեր էգոցենտրիզմը դառնա էկրան, որը ձեզ կպաշտպանի ուրիշներից, ապա անընդհատ սխալներ թույլ կտաք գնահատականներում՝ սխալ մեկնաբանելով այլ մարդկանց գործողություններն ու մտադրությունները, և դա կհանգեցնի նրան, որ ձեր ռազմավարությունները չեն

դիպչի նշանակետին: Դուք պետք է հիշեք այս մասին և ձգտեք ուրիշներին հանգիստ և անտարբեր ընկալել:

Յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր անհատ այլ քաղաքակրթություն է, ուրիշ մշակույթ, փորձեք այն ընկալել հենց այդպես: Դուք պետք է քանդեք անծանոթին, ներթափանցեք նրա մտածելակերպը, բայց ոչ թե զգայունությամբ զբաղվելու համար, այլ ռազմավարական անհրաժեշտությունից ելնելով: Միայն մանրակրկիտ ճանաչելով թշնամուն, կարող եք հույս ունենալ, որ կհաղթեք նրան:

ԱՄՈՒՐ ԳՐԿԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ

1805 թվականին Նապոլեոն Բոնապարտը ջախջախեց ավստրիացիներին Ուլմի մոտ, իսկ ավելի ուշ՝ Աուստերլիցում: Հետևելով կնքված պայմանագրին, նա բաժանեց Ավստրիական կայսրությունը՝ տարածքներ ստանալով Իտալիայում և Գերմանիայում: Նապոլեոնի համար այս բոլոր նվաճումները շախմատային մեծ պարտիայի մի մասն էին: Նրա վերջնական նպատակն էր Ավստրիան դարձնել իր դաշնակիցը (թույլ, խոնարհ), բայց այնպիսի դաշնակից, որը նրան կշիռ կտար Եվրոպայի թագավորական արքունիքում, քանի որ Ավստրիան ավանդաբար այդ օրերին Կենտրոնական ուժ էր եվրոպական քաղաքականության մեջ: Իրականացնելով այս ռազմավարությունը՝ Նապոլեոնը պահանջեց Ֆրանսիայում Ավստրիայի նոր բանագնաց նշանակել արքայազն Կլեմենս ֆոն Մետերնիխին, ով այդ ժամանակ կատարում էր Բեռլինի պրուսական արքունիքում ավստրիական բանագնացի պարտականությունները:

Երեսուներկու ամյա ավստրիացի դիվանագետ Մետերնիխը սերում էր ականավոր և հին եվրոպական ընտանիքից: Նա փայլուն խոսում էր ֆրանսերեն, ուներ խիստ պահպանողական քաղաքական հայացքներ և իր անբասիր վարվելակերպով ու նրբագեղությամբ ձեռք էր բերել կանանց սիրահարի համբավ: Այս հմուտ ազնվականի ներկայությունը նախատեսված էր շքեղություն հաղորդելու այն կայսերական արքունիքին, որը Նապոլեոնը ցանկանում էր ստեղծել: Ավելին, և սա հատկապես կարևոր էր, այդպիսի ազդեցիկ անձի համակրանքը նվաճելով (Նապոլեոնը գիտեր աներևակայելի հմայիչ լինելու արժեքը), կարելի էր հույս դնել նրա օգնության վրա Ավստրիայի վերաբերյալ ծրագիրը իրականացնելու գործում: Նապոլեոնը որոշեց օգտագործել Մետերնիչի թուլությունը գեղեցիկ սեռի նկատմամբ՝ որպես նրա հետ կապ հաստատելու բանալի:

Նրանք առաջին անգամ հանդիպեցին 1806 թվականի օգոստոսին, երբ Մետերնիխը կայսրին հանձնեց իր հավատարմագրերը: Նապոլեոնը զուսպ էր: Նա հագնված էր հանդիսավոր առիթին համապատասխան, բայց մնաց գլխաշորով, ինչը վարվելակարգի կոպիտ խախտում էր: Մետերնիխի կարճ և հանդիսավոր ելույթից հետո Նապոլեոնը քայլեց դահլիճով, խոսեց քաղաքականության մասին: Նրա տոնն ու բարքերը պերճախոսորեն վկայում էին, որ նա սովոր է հրամաններ տալու: (Նապոլեոնը սիրում էր վեր կենալ, երբ խոսում էր նստած մարդկանց հետ):

Այս ներկայացումը պատահական չէր: Ամեն ինչ պլանավորված էր: Նապոլեոնը ցանկանում էր նրբագեղ Մետերնիխին ցույց տալ, որ նա կորսիկացի գյուղացի չէր, այլ կայսր, որին պետք է լուրջ ընդունել: Ունկնդրության ավարտին նա վստահ էր, որ ամեն ինչ հաջող էր անցել, և լիովին գոհ էր արդյունքից:

Անցավ մի քանի ամիս, և Նապոլեոնն ու Մետերնիխը շարունակեցին հանդիպել: Կայսրը փորձեց հմայել իշխանին, բայց նրա հմայքը աշխատեց մի փոքր անսպասելի:

Մետերնիխը ուշադիր ունկնդիր էր, միջամտում էր խելացի դիտարկումներին և գովաբանում Նապոլեոնի ռազմավարական ինտուիցիան: Այդպիսի պահերին կայսրը փայլում էր: Նրա առջև կանգնած էր մի մարդ, որը կարող էր գնահատել նրա հանճարը: Նապոլեոնը սկսեց զգալ Մետերնիխի ընկերակցության կարիքը, և նրանց զրույցները եվրոպական քաղաքականության մասին ավելի ու ավելի անկեղծ դարձան: Նրանց միջև ծագեց բարեկամություն:

Գեղեցիկ սեռի նկատմամբ Մետերնիխի թուլությունը շահարկելու նպատակով, Նապոլեոնը կազմակերպեց նրա հանդիպումը իր քրոջ՝ Կարոլին Մյուրատի հետ, որն էլ փորձեց սիրային կապ հաստատել դիվանագետի հետ: Որոշ ժամանակ անց, Կարոլինը Մետերնիխից իմացավ կառավարության մասին որոշ բամբասանքներ, և նա նաև վստահեցրեց իր եղբորը, որ Մետերնիխը անկեղծ հարգանք ունի իր նկատմամբ: Կարոլինը, իր հերթին, տեղեկացրեց Մետերնիխին, որ Նապոլեոնը դժգոհ է իր կնոջից՝ կայսրուհի Ժոզեֆինայից, ով չէր կարողանում երեխաներ ունենալ և, որ Նապոլեոնը մտածում էր ամուսնալուծության մասին: Սակայն կայսրը, կարծես, անտարբեր էր, որ Մետերնիխը իմացել էր իր անձնական կյանքի մանրամասները:

1809 թվականին Ավստրիան, ձգտելով ռևանշ վերցնել Առուստերլիցի մոտ խայտառակ պարտությունից հետո, պատերազմ հայտարարեց Ֆրանսիային: Նապոլեոնը միայն ուրախ էր դրա համար, քանի որ այդպիսով նա հնարավորություն ստացավ վերջնականապես լուծել ավստրիացիների հարցը: Պատերազմը ծանր էր ընթանում, բայց առավելությունը ֆրանսիացիների կողմն էր, և Նապոլեոնը պարտադրեց նվաստացուցիչ խաղաղության համաձայնագիր՝ բռնակցելով Ավստրիական կայսրության զգալի մասը: Ավստրիական բանակը լուծարվեց, կառավարությունը փոխվեց, և Նապոլեոնի բարեկամ Մետերնիխը ստացավ արտաքին գործերի նախարարի պորտֆելը: Հենց այս պաշտոնում էլ ցանկանում էր տեսնել նրան կայսրը:

Մի քանի ամիս անց տեղի ունեցավ մի իրադարձություն, որը, չնայած Նապոլեոնի համար որոշ չափով անսպասելի էր, բայց ուրախացրեց նրան: Ավստրիայի կայսր Ֆրանց II Հաբսբուրգը նրան առաջարկեց ամուսնանալ իր ավագ դստեր՝ արքհերցոգուհի Մարիա Լուիզայի հետ: Նապոլեոնը ոչ մի պատրանք չուներ, գիտակցելով թե ինչպես են իրեն ատում ավստրիական արքունիքում և, որ այս առաջարկը պետք է հնարավոր լիներ Մետերնիխի ջանքերի շնորհիվ: Ավստրիայի արքայադստեր հետ ամուսնական միությունը հնարավորինս օգտակար էր, այն նպաստելու էր Նապոլեոնի դիրքերի ամրապնդմանը, և նա ուրախությամբ ընդունեց առաջարկը՝ ամուսնալուծվելով Ժոզեֆինայից, 1810 թվականին ամուսնացավ Մարի Լուիզայի հետ :

Մետերնիխը էրցհերցոգուհուն ուղեկցեց Փարիզ, որտեղ տեղի ունեցավ ամուսնությունը: Այժմ նրանց հարաբերությունները Ֆրանսիայի կայսեր հետ էլ ավելի սերտ և բարեկամական դարձան: Ամուսնության շնորհիվ Նապոլեոնը մտավ Եվրոպայի ամենահին ընտանիքներից մեկը, իսկ կորսիկացու համար ընտանիքը շատ բան էր նշանակում, եթե ոչ բոլորը: Այժմ նա ստանում էր դինաստիական լեգիտիմություն, որին ձգտում էր այդքան վաղուց: Զրուցելով իշխանի հետ նա այժմ ավելի անկեղծ էր, քան նախկինում: Ուրախացնում էր Նապոլեոնին նաև իր կինը, երիտասարդ կայսրուհին իրեն ցուցադրելով որպես արտասովոր անձնավորություն, ով հետաքրքրասեր միտք ուներ և Նապոլեոնը պատրաստակամորեն լուսաբանում էր իր քաղաքական ծրագրերը:

1812 թվականին Նապոլեոնը ներխուժեց Ռուսաստան: Այժմ Մետերնիխը դիմեց առաջարկով, ըստ որի Ավստրիան պատրաստ էր Նապոլեոնի տրամադրության տակ

դնել 30,000 զինվոր: Դրա դիմաց Նապոլեոնը թույլ տվեց Ավստրիային վերաստեղծել սեփական բանակը: Նապոլեոնին այս քայլը թվում էր անվնաս և ոչ մի վտանգ չէր պարունակում: Չէ որ երկու երկրներն այժմ կապված են ամուսնական շղթայով, և ի վերջո, նրանց բանակը կարող է նույնիսկ օգտակար լինել:

Ռուսական արշավը վերածվեց աղետի, Նապոլեոնը ստիպված էր նահանջել, նրա բանակը ոչնչացվեց: Մետերնիխն առաջարկեց իր ծառայությունները՝ օգնություն Ֆրանսիային Եվրոպայի այլ քաղաքական ուժերի միջև բանակցություններում: Ավստրիան, որը կենտրոնական տեղ էր զբաղեցնում, ավանդաբար կարևոր դեր էր խաղում նման բանակցություններում: Այսպես թե այնպես, Նապոլեոնին այլընտրանք չէր մնում: Նրան դադարի ժամանակ էր հարկավոր: Նույնիսկ եթե միջնորդի դերը բանակցություններում թույլ տար Ավստրիային վերադարձնել կորցրած անկախությունը, դժվար թե արժեր վախենալ սեփական աներոջից:

1813 թվականի գարնանը բանակցությունները ձախողվեցին, և Եվրոպայում նոր պատերազմ էր սկսվեց, որի ժամանակ վերջին պարտությունից թուլացած Ֆրանսիան բախվելու էր Ռուսաստանի, Պրուսիայի, Անգլիայի և Շվեդիայի հզոր դաշինքին: Այդ ժամանակ ավստրիական բանակն արդեն հզորացել էր: Նապոլեոնը հասկանում էր, որ պետք է ինչ-որ կերպ վերահսկողություն ձեռքից բաց չթողնել, բայց լրտեսները նրան տեղեկացրեցին, որ Մետերնիխը գաղտնի բանակցություններ է վարում հակառակորդի հետ: Սա, հավանաբար, ինչ-որ խորամանկություն էր, ռազմական հնարք: Անշուշտ, ավստրիական կայսրը չէր կարող դավադրություն կազմակերպել իր սեփական դստեր ամուսնու դեմ: Սակայն, մի քանի շաբաթ անց գաղտնիքը պարզ դարձավ: Չնայած Ֆրանսիայի կողմից խաղաղության բանակցություններին, Ավստրիան հրաժարվեց միջնորդի իր չեզոք դիրքից և միացավ կոալիցիային:

Նապոլեոնը չէր կարողանում հավատալ իր ականջներին: Նա շտապեց Դրեզդեն՝ Մետերնիխին հանդիպելու: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ հունիսի 26-ին: Մետերնիխի հայացքից Նապոլեոնը ցնցվեց. որտե՞ղ էր անհետացել անհոգ, բարյացակամ Մետերնիխը, որին նա ճանաչում էր: Սառը, պաշտոնական տոնով իշխանը նրան տեղեկացրեց, որ Ֆրանսիային խնդրում են ընդունել պայմանները և ստորագրել պայմանագիր, ըստ որի պեք է վերականգնվեր Ավստրիայի նախկին սահմանները:

Ավստրիան պետք է պաշտպանի իր շահերը և հանդիսանա Եվրոպայում կայունության երաշխավորը: Հանկարծ Նապոլեոնը հասկացավ. Մետերնիխը միշտ խաղ էր խաղում, և նույնիսկ ամուսնական դաշինքը ոչ այլ ինչ էր, քան դավադրություն, որը նախատեսված էր նրան կուրացնելու Ավստրիայի սպառազինության և անկախության իրական նպատակները թաքցնելու համար: «Այսպիսով, ես աններելի հիմարություն արեցի՝ ամուսնանալով Ավստրիայի էրցհերցոգուհու հետ», - բացականչեց Նապոլեոնը: «Եթե Ձերդ Մեծությունը ցանկանում է իմանալ իմ կարծիքը», - հանգիստ պատասխանեց Մետերնիչը, - «ես անկեղծորեն կասեմ, որ Նապոլեոնը՝ նվաճողը, սխալ է թույլ տվել»:

Նապոլեոնը վրդովված մերժեց Մետերնիխի առաջարկած խաղաղության պայմանները: Ի պատասխան՝ Ավստրիան խախտեց չեզոքությունը և միացավ կոալիցիային՝ փաստորեն դառնալով նրա ռազմական առաջնորդը: 1814-ի ապրիլին կոալիցիան վերջնական ջախջախեց Նապոլեոնի բանակը, և նրան աքսորեցին Միջերկրական ծովում գտնվող Էլբա կղզի:

Մեկնաբանում

Նապոլեոնը հպարտանում էր մարդկանց հասկանալու և նրանց վրա ազդելու ունակությամբ: Այնուամենայնիվ, այս դեպքում նա բախվեց ավելի ուժեղ մրցակցի, մի մարդու, ով նրան գերազանցեց այս խաղում: Հաշվի առեք, թե ինչպես է գործել Մետերնիխը: Թաքնվելով արտաքին ընկերասիրության և էլեգանտության վահանի ներքո՝ նա հանգիստ և առանց շտապողականության ուսումնասիրեց իր թշնամիներին՝ իր անհոգ անկեղծությամբ հրավիրելով նրանց պատասխան անկեղծության:

Երբ նա առաջին անգամ հանդիպեց Նապոլեոնին, տեսավ մի մարդու, որը ցանկանում էր տպավորություն թողնել: Նա նկատեց, թե ինչպես էր կարճահասակ Նապոլեոնը ոտքի կանգնում՝ փորձելով ավելի բարձրահասակ թվալ, և թե ինչպես էր նա փորձում թաքցնել իր ականջ ծակող կորսիկական առոգանությունը: Հետագա հանդիպումները հաստատեցին Մետերնիխի տպավորությունները՝ Նապոլեոնը երազում էր միանալ եվրոպական արիստոկրատական վերնախավին և, բացի այդ, կայսրը տառապում էր բարդույթներից և անվստահությունից:

Հենց այս եզրակացությունների վրա էլ Մետերնիխը հիմնեց իր հանճարեղ հակառազմավարությունը՝ Նապոլեոնին առաջարկ անել ամուսնանալու ավստրիական հարստության ներկայացուցչի հետ: Կորսիկացու համար այս առաջարկը պարզապես գովեստի խոսքեր չէր, այն անսահման հորիզոններ էր բացում: Այդպիսի վեհությունը նախատեսված էր Նապոլեոնին կուրացնելու համար՝ խանգարելով նրան տեսնել ակնհայտը: Մետերնիխի և Ֆրանց II Հաբսբուրգի համար, ովքեր ծնունդով ազնվականներ էին, ընտանեկան կապերը ոչինչ չէին նշանակում դինաստիան պահպանելու խնդրի համեմատ: Մետերնիխը հանճարեղորեն գտավ իր ռազմավարության համար հարմար թիրախ՝ ոչ թե Նապոլեոնի բանակը, որի հետ Ավստրիան այդ ժամանակ անկարող էր մարտնչել (չմոռանանք, որ Նապոլեոնը հիանալի զորավար էր), այլ Նապոլեոնի սեփական միտքը: Իշխանը հասկանում էր, որ նույնիսկ ամենաուժեղ և տաղանդավոր մարդիկ, ըստ էության, մնում են մարդիկ, որոշակի մարդկային թուլություններով հանդերձ: Նապոլեոնի անձնական կյանքի մեջ թափանցելով, նրան հարգանքով վերաբերվելով և միշտ հարգանք ցուցաբերելով՝ Մետերնիխը ուսումնասիրեց նրա բնավորությունը՝ փնտրելով նրա թույլ կողմերը, որպեսզի կարողանա հարված հասցնել, և այնպիսի հարված, որը ոչ մի բանակ չէր կարող հասցնել: Նրան ավելի ու ավելի մտերմանալով՝ կայսեր քրոջ՝ Կարոլինայի, էրցհերցոգուհի Մարի Լուիզայի միջոցով, ջերմ հանդիպումների միջոցով՝ ավստրիացին հնարավորություն ստացավ խեղդել կայսրին իր թվացյալ բարեկամական գրկում:

Հարկ է հասկանալ, որ ձեր իսկական թշնամին միտքն է՝ ձեր մրցակցի միտքը: Նրա բանակը, ռեսուրսները, նրա հետախուզությունը, դուք կարող եք հաղթահարել այս ամենը, եթե կարողանաք զգալ և գտնել նրա թույլ տեղերը, հուզական բացը: Օգտագործելով այս գիտելիքները, դուք կարող եք մոլորեցնել, շահարկել: Դուք կարող եք հաղթահարել նույնիսկ աշխարհի ամենահզոր բանակը, եթե զրկեք գլխավոր հրամանատարին հոգեկան հավասարակշռությունից: Իսկ ուժեղ մրցակցի թույլ կողմերը բացահայտելու լավագույն միջոցը ոչ թե լրտեսներն ու հետախույզներն են, այլ հենց այդ ընկերական գրկախառնությունները: Թաքնվելով բարեկամական, գուցե նույնիսկ քծնանքի ետևում՝ դուք կարող եք դիտարկել ձեր թշնամուն՝ առանց խանգարելու նրան թուլացնել իր զգոնությունը, բացվել ձեր առջև և մատնել իրեն: Շահեք նրա վստահությունը և պատճենեք նրա մտածելակերպը: Եթե կարողանաք գտնել ձեր թշնամու թույլ կետը՝ անսանձ խառնվածքը, ինքն իրեն վերահսկելու

անկարողությունը, հակառակ սեռի նկատմամբ թուլությունը, ինքնավստահության պակասը, դուք կստանաք այն նյութը, որը կօգնի ձեզ ոչնչացնել թշնամուն:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Ամենամեծ իշխանությունը, որին մենք կարող ենք հասնել այս կյանքում, չի տա ոչ հարստությունը, ոչ ուժը, ոչ էլ նույնիսկ վիրտուոզ ռազմավարական կարողությունները: Դրան կարելի է հասնել՝ սովորելով հասկանալ մարդկանց, կարդալ նրանց գրքի պես: Ունենալով այդպիսի գիտելիքներ դուք կտարբերեք իսկական ընկերոջը չարախոհից, կբացահայտեք գաղտնի թշնամիներին: Դուք կկարողանաք կանխատեսել թշնամիների ծրագրերը, հաշվարկել հնարավոր ինտրիգները և նախապես միջոցներ ձեռնարկել: Այս թափանցիկությունը թույլ կտա ձեզ տեսնել և հասկանալ, թե որ զգացմունքներն են ամենադժվարը վերահսկել: Զինվելով գաղտնի գիտելիքներով, դուք կարող եք հեշտությամբ մանևրել և ոչնչացնել թշնամուն:

Ռազմական պատմության արշալույսից ի վեր նման գիտելիքները եղել են կենսականորեն կարևոր ռազմավարական նպատակ: Հենց սա է պատճառը, որ ի հայտ են եկել լրտեսական ու հետախուզական համայնքները: Սակայն լրտեսները (գործակալները) անվստահելի են: Նրանք զտում են տեղեկատվությունը իրենց սեփական կողմնակալությունների և նախապաշարմունքների միջոցով: Քանի որ նրանց մասնագիտությունը պահանջում է, որ նրանք ճշգրիտ դիրքավորվեն երկու կողմերի միջև, փորձելով գործել անկախ, չափազանց դժվար է նրանց վերահսկելը: Ավելին, միշտ կա ռիսկ, որ ձեր լրտեսը (գործակալը) կարող է անցնել թշնամու կողմը: Ավելին, կան նուրբ երանգներ, որոնք մատնում են մարդկանց՝ ինտոնացիան, հայացքը, աչքերի փայլը, և այս բոլոր մանրամասները անխուսափելիորեն ջնջվում են և չեն հայտնվում հետախուզական զեկույցներում: Եվ, ընդհանուր առմամբ, հետախուզությունը գործնականում անարժեք է և քիչ հավանական է, որ իսկապես օգտակար լինի, եթե չգիտեք, թե ինչպես մեկնաբանել մարդկային վարքագիծը և չեք հասկանում հոգեբանությունը: Առանց այս հմտությունների, դուք կներկայացնեք ցանկալին որպես իրականություն, կտեսնեք այն, ինչ ցանկանում եք տեսնել՝ գտնվելով ձեր սեփական կողմնակալ հաստատումների շրջանակում:

Ռազմական և քաղաքական գործիչները, ովքեր հմտորեն օգտագործում էին հետախույզներին՝ Հանիբալը, Հուլիոս Կեսարը, արքայազն Մետերնիխը, Ուինսթոն Չերչիլը, Լինդոն Ջոնսոնը (երբ նա ԱՄՆ սենատոր էր), առաջին հերթին մարդկային բնության նուրբ գիտակներն էին: Նրանք անընդհատ կատարելագործել են իրենց հմտությունները՝ շփվելով ուրիշների հետ, դիտարկելով նրանց վարքը, և արդյունքում ձեռք են բերել մարդկանց անսխալ հասկանալու ունակություն: Միայն այս բազան ունենալով նրանք կարող էին հույս դնել այն փաստի վրա, որ հետախուզությունը ոչ թե կխեղաթյուրի, այլ կընդլայնի իրավիճակի իրենց տեսլականը:

Առաջին հերթին, հրաժարվեք այն մտքից, որ յուրաքանչյուր մարդ անլուծելի առեղծված է, և գրեթե ահնար է ներթափանցել մարդու հոգու մեջ: Եթե ձեզ շրջապատող մարդիկ խորհրդավոր և առեղծվածային են թվում, ապա միայն այն պատճառով, որ մեզ բոլորիս սովորեցնում են թաքցնել մեր իրական զգացմունքներն ու հակումները երիտասարդ տարիներից: Հասկանալի է, եթե մենք լիովին բաց լինենք և բոլորին ցույց տանք, թե ինչ ենք զգում և ինչ ենք պատրաստվում անել, դա մեզ անպաշտպան կդարձնի չարիքի դեմ: Մյուս կողմից, ցանկացած առիթով մեր կարծիքը ճակատին արտահայտելով, մենք վտանգում ենք վիրավորել շատ մարդկանց:

Հետևաբար, մեծանալով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ մտքերն ու զգացմունքները թաքցնելու ունակությունը դառնում է մեր երկրորդ էությունը:

Այս պարտադրված գաղտնիությունը հետախուզությունը դարձնում է դժվար, բայց միևնույն ժամանակ չափազանց հետաքրքիր և լիովին իրագործելի առաքելություն: Փաստն այն է, որ նույնիսկ այն մարդիկ, ովքեր ամեն ինչ անում են իրենց մտքում եղածը թաքցնելու համար, միևնույն է, ակամա մատնում են իրենց: Հեշտ չէ անընդհատ մտքերն ու զգացմունքները գաղտնի պահել ուրիշներից: Մշտական լարվածությունը ուժասպառ է անում, իսկ խոսելու և անկեղծ լինելու հնարավորությունը թեթևացնում է: Մենք բոլորս կարոտում ենք այն մարդկանց, որոնց առջև կարող ենք բացվել՝ առանց ոչինչ թաքցնելու, նույնիսկ մեր էության մութ կողմերը: Եվ նույնիսկ եթե մենք գիտակցաբար ջանք ենք գործադրում չբացահայտելու ինքներս մեզ, մենք միևնույն է ուղարկում ենք ազդանշաններ, որոնք կարող են բացահայտել մեր ներսում կատարվողի գոնե մի մասը՝ լեզվի պատահական սայթաքումներ, ձայնի անժամանակ դող, անվերահսկելի շարժումներ, հայացքներ, որոնք կարող են ավելի բարձր խոսել, քան խոսքերը, ինքնաբուխ գործողությունները, որոնք բացատրության արժանի չեն, արտահայտությունները, որոնք մեզանից դուրս են թռչում, երբ մենք խմած ենք:

Պետք է հասկանալ, որ մարդիկ անընդհատ ազդանշաններ են ուղարկում, որոնք մատնում են իրենց իրական մտադրություններն ու թաքնված ցանկությունները: Եթե մենք դրանք չենք կարդում, ապա դա միակ բանն է մեր անորոշության և անուշադրության պատճառով: Պատճառը պարզ է. մեզանից յուրաքանչյուրը պարփակված է իր սեփական աշխարհում, յուրաքանչյուրը ուշադիր լսում է իր ներքին մենախոսությունը՝ ուշադրություն չդարձնելով ուրիշներին տեղիք տալով սեփական էգոյին: Ուիլյամ Մաքնաթենի նման, մենք մեզ շրջապատող մարդկանց տեսնում ենք միայն որպես մեր արտացոլանք: Եվ դուք ավելի զգայուն կդառնաք նրանց ուղարկած ազդանշանների նկատմամբ միայն այն դեպքում, եթե կարողանաք հրաժարվել ձեր եսակենտրոնությունից, հեռանաք մարդկանց մասին կանխակալ պատկերացումներից և փորձեք տեսնել նրանց այնպիսին, ինչպիսին կան:

Մարդկանց լավ հասկանալու ունակությունը չափազանց բարձր էր գնահատվում Ճապոնական սամուրայների[1] շրջանում: Այս հմտությունը հատկապես կարևորվում էր Սինկագյո-Ռյու թրի տիրապետման դպրոցում, որի առաջին վարպետներից մեկը 17-րդ դարի սամուրայ Յագիու Մունենորին էր:

Գարնանային մի առավոտ Մունենորին, այն ժամանակ արդեն ծեր մարդ, հանգիստ զբոսնում էր պարտեզում՝ վայելելով բալենու ծաղկումը: Նրան ուղեկցում էր մի երիտասարդ ծառա (մենք նրան կանվանեինք թիկնապահ): Հանկարծ Մունենորին կտրուկ կանգ առավ: Նա զգաց վտանգ: Նայելով շուրջը՝ Մունենորին ոչ մի կասկածելի բան չտեսավ, բայց այդ ժամանակ էլ տագնապի զգացումը չթողեց նրան: Անհանգստանալով՝ նա շրջվեց դեպի տուն, իսկ այնտեղ նստեց՝ մեջքը հենելով սյունին, որպեսզի պաշտպանվի անսպասելի հարձակումից: Մունենորին բավականին երկար մնաց այդ դիրքում, մինչ թիկապահ-ծառան համարձակվեց հարցնել, թե ինչ է

---

[1] **Սամուրայ**՝ ճապոնական ավատատիրության ժամանակների ռազմականացված ազնվականության խավ է: Բուն «սամուրայ» բառն առաջացել է *saberu* բայից, որը նշանակում է «ծառայել»: Այլ կերպ ասած, «սամուրայը» իր ավատատիրոջ՝ դայմյոյի ռազմական ծառան էր. թիկնապահը, զինվորը, պաշտոնյան: Այդ առումով, սամուրայի ամենապատվավոր պաշտոնն էր համարվում՝ տիրոջ թրի պահապան լինելը:

կատարվում: Սամուրայը խոստովանեց, որ ծաղկած ծառերով հիանալու ժամանակ զգացել է անխուսափելի սպառնալիքի՝ հարձակման պատրաստ թշնամու մոտեցումը: Այժմ նրան անհանգստացնում էր այն հանգամանքը, որ վտանգն ակնհայտորեն երևակայական էր: Թվում էր, թե նրա մոտ տեսիլքներ էին սկսվել:

Սամուրայի համար կենսականորեն կարևոր էր սրությամբ զգալ հարձակման սպառնալիքը, միշտ զգոն լինել, որպեսզի կարողանար անմիջապես հետ մղել վտանգը: Եթե Մունենորին կորցներ այս զգացողությունը, նրան կարող էին համարել ավարտված: Այդ պահին թիկապահ-ծառան խոնարհվեց սամուրայի առջև և խոստովանեց: Երբ Մունենորին զբոսնում էր այգում, երիտասարդի մոտ հանկարծ մի միտք հղացավ, եթե նա ցանկանար սպանել իր տիրոջը, ավելի լավ պահ չէր լինի: Ի վերջո, լիովին կլանված հիասքանչ բալենու ծաղիկների խորհրդածությամբ, նույնիսկ այս մեծ մարտարվեստագետը ժամանակ չէր ունենա զսպելու թիկապահ-ծառանային և հետ մղելու հարձակումը:

Մունենորին ոչ մի կերպ չէր կորցրել իր հմտությունները. ընդհակառակը, այլ մարդկանց հույզերի և մտադրությունների նկատմամբ զարմանալի, սրված զգայունությունը նրան թույլ տվեց որսալ իրեն հետևող թիկապահ-ծառայի տրամադրության անցողիկ փոփոխությունը: Ահա թե ինչպես է ձին արագորեն ընկալում իր հեծյալի ցանկությունները, կամ հավատարիմ շունը՝ իր տիրոջ մտքերը: Կենդանիները հենց այդպես են արձագանքում մարդու հուզական տրամադրությանը, քանի որ ամբողջովին կենտրոնացած են դրա վրա: Նմանատիպ սկզբունքով սամուրայներին սովորեցնում են, ամբողջովին ազատվել իրենց միտքից, ակնթարթորեն կենտրոնանալ մեկի վրա, որպեսզի ոչ մի կողմնակի միտք չգրավի իրենց: Սամուրայների Սինկագյո-Ռյու դպրոցը նույնպես գործում է նույն սկզբունքով: Արդյունքում, հակառակորդի ձեռքի թեթև շարժումով, նրա արմունկի փոքրագույն լարվածությամբ կարելի է կռահել հարձակման մտադրության մասին: Նման մարտիկը թշնամուն տեսնում է ամբողջ ճանապարհով, անցողիկ հայացքից նա կարողանում է հասկանալ, թե երբ է նա պատրաստվում հարվածել, իսկ ծնկի նյարդային ցնցման մեջ տեսնում է շփոթության կամ վախի նշան: Մունենորիի նման վարպետը բառացիորեն կարդում էր մտքերը՝ կռահելով մի մարդու մտադրությունը, որին նույնիսկ իր առջև չէր տեսել:

Ուժը, որը ուսուցանվում էր սամուրայի դպրոցում (այն կիրառել է նաև իշխան Մետերնիխը), ոչ այլ ինչ է, քան սեփական էգոյից ազատվելու ունակություն և որոշ ժամանակ մեկ այլ մարդու մտքերի մեջ ընկղմվելը: Դուք կզարմանաք, թե որքան բան կարող եք սովորել մարդկանց մասին, եթե գոնե որոշ ժամանակ դադարեցնեք անվերջ ներքին մենախոսությունը, մաքրեք մտքերը և ուշադրություն դարձնեք այն ամենին, ինչ տեղի է ունենում այս պահին: Դետալները և մանրամասները, որոնք կբացահայտվեն ձեզ համար, այն «չֆիլտրացված», գրաքննության չենթարկված տեղեկատվությունն է, որից կազմված է մարդկային թուլությունների և ձգտումների բավականին ամբողջական և ճշգրիտ պատկերը:

Ուշադրություն դարձրեք մարդկանց աչքերին. նրանց ազդանշանները հատկապես դժվար է թաքցնել ուրիշներից, և դրանք հատկապես պերճախոս կերպով ցույց են տալիս մարդու տրամադրությունը:

Իհարկե, սկզբունքորեն կարևոր է, որ ուրիշները չնկատեն, թե ինչպես եք դա իրականացնում: Նապոլեոնի հետ շփվելիս իշխան Մետերնիխի բարեհամբույր տեսքը օգնեց նրան թաքցնել իր մտադրությունները: Չափից շատ հարցեր մի տվեք: Հնարքն այն է, որ մարդիկ հանգստանան, կորցնեն իրենց զգոնությունը և ինքնուրույն բացվեն

ձեր առջև՝ առանց հարկադրանքի: Հետևեք նրանց, բայց այնքան հանգիստ և աննկատ, որ ոչ ոք չգուշակի ձեր մտադրությունները:

Տեղեկատվությունն անօգուտ է, եթե չգիտեք, թե ինչպես օգտագործել այն, ինչպես օգտագործել այն իրականը ցուցադրությունից զատելու համար: Դուք պետք է սովորեք տարբերակել բազմաթիվ հոգեբանական տեսակներ: Երբ ինչ-որ մեկը վառ կերպով ցույց է տալիս անհատականության որոշակի առանձնահատկություններ, այդ հատկությունները կարող են պարզվել, որ կրում են միայն քողարկման բնույթ: Այս երեւույթը կոչվում է քողարկված հակադրություն: Անառակության, շողոքորթության, ծառայելու պատրաստակամության հետևում կարող են թաքնված լինել թշնամանքն ու չար կամքը, կոպտությունն ու չարագործությունը: Բարոյախոսը, պատկերելով անարատություն և մաքրություն, այդպիսով փորձում է ծածկել նողկալի արատների հակումը: Եվ կարևոր չէ՝ այս մարդիկ փորձում են ուրիշների աչքերին թոզ փչել, թե՞ ինքնախաբեությամբ են զբաղվում, և սա տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ մարդիկ ցանկանում են համոզել իրենց, որ իրենք այն չեն, ինչից վախենում են լինել, գլխավորն այն է, որ հակառակ գիծը հաճախ հստակ տեսանելի է և թափանցում է մակերեսին:

Ընդհանուր առմամբ, ավելի հեշտ է դիտարկել մարդկանց գործողությունները, հատկապես ճգնաժամային պահերին: Այդպիսի իրավիճակներում մարդը կամ ակամա բացահայտում է իր թույլ կողմերը, կամ այնքան է փորձում թաքցնել դրանք, որ դուք հնարավորություն ունեք տեսնելու, թե ինչ է թաքնված դիմակի տակ: Դուք կարող եք միջամտել. թվացյալ անվնաս մի բան կարող է ունենալ ցանկալի ազդեցություն: Դուք կարող եք ասել ինչ-որ կոպիտ կամ անսպասելի, ինչ-որ սադրիչ բան և ուշադիր հետևել նրանց արձագանքին: Կամ ձեր հակառակորդը ակամա սխալ կգործի, կսայթաքի կամ կուղղի սուր հայացք, կամ նա արագ դիմակ կգցի, որը դուք՝ ձեր ստեղծած լաբորատոր փորձի ժամանակ, հեշտությամբ կնկատեք:

Մարդկանց հասկանալու արվեստի ամենակարևոր բաղադրիչը նրանց դիմադրության ուժը որոշելու ունակությունն է: Առանց դա իմանալու, դուք ռիսկի եք դիմում վերագնահատել կամ, ընդհակառակը, թերագնահատել դրանք՝ կախված ձեր սեփական վստահության մակարդակից և ձեր վախերից: Դուք պետք է հաստատ իմանաք, թե որքանով են մարդիկ պատրաստ պայքարել, արդյոք նրանց մարտական ոգին բարձր է, թե ոչ: Եթե մարդը թաքցնում է վախկոտությունն ու անվճռականությունը, ապա մեկ մղումը բավական է, որպեսզի նա նահանջի, բայց նա, ով կորցնելու ոչինչ չունի, կպայքարի մինչև վերջ: Մոնղոլները սովորություն ունեին իրենց ռազմական արշավները սկսել մարտով, որի միակ նպատակը թշնամու ուժն ու վճռականությունը ստուգելն էր: Թշնամու դեմ ցանկացած գործողություն նրանք սկսում էին միայն նրա մարտական ոգու վիճակը որոշելուց հետո: Այսպիսի մարտթեստը նաև առավելություն ուներ, որ թույլ էր տալիս պարզել հակառակորդի ծրագրերն ու մտահղացումները:

Ձեր թշնամիների մասին հավաքված տեղեկատվության որակը անհամեմատ ավելի կարևոր է, քան դրա քանակը: Մեկ, բայց իսկապես արժեքավոր կտորը կարող է ծառայել որպես նրանց ոչնչացման հիմք և ձեր հաղթանակի բանալին: Կարթագենի մեծ զորավար Հաննիբալը, պարզելով, որ հռոմեացի հրամանատարը, որի հետ նա պատրաստվում էր բախվել, չափազանց ինքնավստահ և անզուսպ է, խորամանկորեն բացահայտեց իր թուլությունը՝ այդպիսով հռոմեացուն դրդելով անխոհեմ, շտապողական հարձակման:

Ուինսթոն Չերչիլը հասկացավ, որ Հիտլերը հոգեպես կայուն անձ չէ և անհաջողության չնչին նշույլի դեպքում ընկնում է հիստերիկ վիճակի մեջ: Անգլիայի վարչապետին դա բավական էր հասկանալու համար, թե ինչպես հավասարակշռությունից հանել ֆյուրերին և հետագայում օգտվել այդ հնարքից: Ինչ-որ սահմանային գոտու վրա կեղծ հարձակումը, օրինակ՝ Բալկաններում, Հիտլերին ստիպեց սպառնալիքներ տեսնել բոլոր կողմերից, ընդլայնել պաշտպանությունը՝ թույլ տալով կոպիտ մարտավարական սխալներ:

Իհարկե, հետախուզության հնարավորությունները սահմանափակ են. ստացված ոչ բոլոր տեղեկություններն են հուսալի, և առաջին ձեռքից ստացված ոչ ամեն բան կարելի է «հալված յուղի տեղ դնել»: Այնուամենայնիվ, լավ զարգացած լրտեսական ցանցը կօգնի ձեզ ընդլայնել ձեր գիտելիքները, հատկապես, եթե սովորեք, թե ինչպես ճիշտ մշակել ստացված տեղեկատվությունը:

Լավագույն տարբերակն այն է, եթե դա լինի ոչ ֆորմալ կառույց՝ համախոհների խումբ, ովքեր ուրախ կլինեն դառնալ ձեր աչքերն ու ականջները: Ցանկալի է նաև լավ հարաբերություններ հաստատել այն մարդկանց հետ, ովքեր հնարավորություն ունեն տեղեկություններ ստանալ թշնամու մասին: Մեկ ընկերը, ով ճիշտ տեղում է, կկարողանա ձեզ համար ավելի արժեքավոր տեղեկություններ հաղորդել, քան վարձու հետախույզների մի ամբողջ բազմություն:

Ժամանակին Նապոլեոնի վարձու լրտեսների հետախուզական ցանցը չնչին էր, բայց նա գերազանց և չափազանց օգտակար տեղեկություններ էր ստանում Եվրոպայի դիվանագիտական շրջանակներում տեղի ունեցող իրադարձությունների մասին վստահելի ընկերների միջոցով:

Փնտրեք ներքին լրտեսներ՝ թշնամու ճամբարից մարդկանց, ովքեր դժգոհ են և ունեն իրենց սեփական խնդիրներն ու շահերը: Այդպիսի մարդիկ կարող են դառնալ ձեր օգնականները, գործել ձեր շահերից ելնելով և ձեզ տրամադրել ավելի արժեքավոր տեղեկատվություն, քան ցանկացած գործակալ, որին դուք ներդրել եք դրսից: Վարձեք մարդկանց, որոնց ձեր թշնամին ազատել է աշխատանքից: Նրանք կասեն ձեզ, թե ինչ կա նախկին ղեկավարների մտքում: Նախագահ Բիլ Քլինթոնը հանրապետական ճամբարում ստեղծված իրավիճակի մասին ամենահուսալի և արժեքավոր տեղեկատվությունը ստանում էր իր խորհրդական Դիկ Մորիսից, ով երկար տարիներ աշխատել էր նրանց համար և գիտեր նրանց բոլոր խնդիրներն ու թույլ կողմերը, ոչ միայն կազմակերպչական, այլև անձնական: Բայց զգույշ եղեք: Երբեք մի վստահեք որևէ լրտեսի կամ մի հույս դրեք տեղեկատվության մեկ աղբյուրի վրա, անկախ նրանից, թե որքան հուսալի կարող է այն թվալ: Առանց այդ տեղեկատվությունը կրկնակի ստուգելու, դուք ձախողման, մանիպուլացվելու ռիսկի առջև կկանգնեք, կամ ձեզ կտրամադրեն կողմնակալ, կամ լիովին կեղծ տեղեկատվություն:

Կան մարդիկ, ովքեր իրենց շուրջը թողնում են հսկայական քանակությամբ փաստագրական ապացույցներ՝ հոդվածներ, հարցազրույցներ և նմանատիպ այլ բաներ: Սա թույլ է տալիս նրանց մասին իմանալ ոչ պակաս, քան գործակալների և հետախույզների միջոցով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուց շատ առաջ Ադոլֆ Հիտլերի «Mein Kampf» գիրքը դարձավ նրա հայացքների և մտադրությունների միանշանակ վկայությունը, չհաշված հեղինակի հոգեբանական վիճակի վերաբերյալ այն զգալի պատկերացումը, որը կարելի էր նկատել տողատակերում: Գեներալներ Էրվին Ռոմելը և Հայնց Գուդերիանը նույնպես գրել են բլիցկրիգի՝ իրենց կողմից

պատրաստվող նոր տեսակի կայծակնային պատերազմի մասին: Մարդիկ շատ բան են բացահայտում իրենց մասին իրենց գրած տեքստերում, մասամբ՝ միտումնավոր, մասամբ էլ՝ որովհետև ոչինչ չի խանգարում լավ ուսումնասիրողին կարդալ տողերի արանքում:

Վերջապես, վերջին բանը: Հակառակորդը անշունչ առարկա չէ, որից կարող եք կանխատեսելի գործողություններ և արձագանքներ ակնկալել ձեր ռազմավարությունները պլանավորելիս: Թշնամիները անընդհատ փոխվում են՝ հարմարվելով մեր արածներին: Նորարարություններ իրականացնելով նրանք ձգտում են դասեր քաղել իրենց սխալներից և մեր հաղթանակներից: Հետևաբար, թշնամուն հասկանալը երբեք հանգիստ գործ չէ: Զգոն եղեք, բարելավեք ձեր ինտելեկտը և մի ենթադրեք, որ ձեր հակառակորդը երկու անգամ նույն կերպ կվարվի:

Պարտությունը լավ ուսուցիչ է, և ձեր մրցակիցը, ով այսօր պարտվում է, վաղը կարող է ավելի խելացի լինել: Կառուցեք ձեր ռազմավարությունները հաշվի առնելով դա: Թշնամու մասին ձեր տեղեկացվածությունը ոչ միայն պետք է լինի ամբողջական, այլև ժամանակին:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Լուսավորյալ կառավարիչներն ու իմաստուն զորավարներն առաջ շարժվեցին, հաղթեցին և իրագործելով սխրանքներ գերազանցեցին բոլորին, քանի որ նրանք ամեն ինչ նախապես գիտեին: Նրանք գիտեին, որ գիտելիքները հնարավոր չէ նախապես ձեռք բերել աստվածներից և դևերից, ինչպես նաև հնարավոր չէ ձեռք բերել եզրակացությունների միջոցով՝ ըստ նմանակման, կամ որևէ հաշվարկով: Հակառակորդի դիրքի մասին գիտելիքը կարող է ստացվել միայն մարդկանցից:

Սուն Ցզի (մ.թ.ա. 4-րդ դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Մինչդեռ ջանք եք թափում բացահայտելու ձեր թշնամուն, փորձեք ինքներդ հնարավորինս դժվար հասկանալի լինել նրանց համար: Քանի որ մարդիկ, և սա ճիշտ է, գործ ունեն միայն արտաքին տեսքի հետ և հեշտությամբ խաբվում են: Եղեք անկանխատեսելի, միշտ անակնկալի բերեք նրանց անսպասելի արձագանքներով: Նետեք նրանց մի քանի ոսկե ձուլակտորներ՝ ձեր ներքին կյանքի աննշան ակնարկներ, որոնք ոչ մի կապ չունեն ձեր իրական էության հետ: Ձգտեք մնալ անթափանց և անհասկանալի, և ոչ ոք չի կարողանա պաշտպանվել ձեզանից կամ օգտագործել հետախուզական տվյալները, որը փորձում է հավաքել ձեր դեմ:

Սկիզբը.
1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf

7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
9) https://www.datocms-assets.com/63284/1766256811-stance_arm.pdf
10) https://www.datocms-assets.com/63284/1771097564-chin-strat-territory_arm.pdf
11) https://www.datocms-assets.com/63284/1775331518-battle-war_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi